ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT
OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC
OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ ՊՎ1Ա/4345
"19" 12 2017թ.

«ԷԼԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
Կ. Մեհրաբյանին
Հասցե՝ ք. Երևան, Լենինգրադյան 23/13 մուտք 2, 50
էլ. հասցեն՝ mehrabyan_karen@mail.ru
Հեռ.՝ +37477-61-04-00
ՀՎՀՀ՝ 02627826

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-10/7-2 ծածկագրով գնման պայմանագրի(այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 20.09.2017թ. մատակարարել 400 հատ «Օդատաքացուցիչներ (Էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ (մեծ)» ապրանքատեսակ՝ 2,800,000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն 13.12.2017թ. դրությամբ նշված քանակի մատակարարումը չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.12.2017թ.-ին միակողմանի՝ 400 հատ «Օդատաքացուցիչներ (Էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ (մեծ)» ապրանքատեսակի մասով լուծում է ՇՀԱՊՁԲ-10/7-2 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժ փոխանցել 119,000 (հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ից կգանձվի նաև Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 1,437,000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամի չափով:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ